ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաքս Փաշայան
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան
ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան
ԻՄԱՄ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՄՈՒՇ.....50-61

Անանա Անտոնյան
ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սպարտակ Բաղդասարյան
2005 Թ.-Ի ԻՐԱՔՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Սաֆարյան
ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....95-109

Սամվել Ռամազյան
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ 110-116

Թամարա Աղամալյան
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ. 117-131

Ալբինա Մուրադյան
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան
ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԾԱՅՐԱՀԵՂ ՇԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ 153-167

Լիանա Պետրոսյան
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2013ԹԹ.) 168-182

Ժաննա Վարդանյան *
ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ 183-195

***

Աշխեն Հովսեփյան
ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Արտյոմ Տոնոյան
Հովհաննես Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, «Էլդորադո» հրատ., Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ: 205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan
SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF DOUBLE STANDARDS 7-21

Gor Gevorgyan
TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY: OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan
DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021). 35-49

Tatev Mkrtchyan
IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS RIGHTEOUSNESS AND PIETY 50-61

Anna Antonyan
THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE 9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan
THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION OF A NEW SYSTEM OF GOVERNMENT 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan
ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH LANGUAGE AND THEIR COLLOCATIONS IN THE ARMENIAN LANGUAGE 95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC "KOROGLU" 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS'
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

***

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, "Eldorado" publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211

Գոռ Գևորգյան[1]

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.)

Բանալի բառեր՝ *հայեցակարգ, աշխարհաքաղաքականություն, քաղաքական ինքնություն, Եգիպտոս, տարածաշրջան, Մուբարաք, Մուրսի, Ալ-Սիսի, անվտանգություն համագործակցություն*

Աշխատանքը մի փորձ է՝ ուսումնասիրելու Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթթահ ալ Սիսիի արտաքին քաղաքական նոր հայեցակարգի արաբական ուղղությունը:

Եգիպտոսի արտաքին քաղաքական հայեցակարգը ճիշտ հասկանալու համար հարկավոր է անդրադառնալ նաև Սիսիին նախորդած երկու նախագահների՝ Հոսնի Մուբարաքի և Մուհամմեդ Մուրսիի արաբական քաղաքականության առանցքային հարցերին:

Պետության արտաքին քաղաքական ուղեգծի առանձնահատկությունների վերլուծության հարցում հաճախ կարևոր տեղ է զբաղեցնում այսպես կոչված «արտաքին քաղաքական ինքնություն» եզրույթը: Այն պայմանավորում է արտաքին հարաբերություններում պետությունների կողմից ինքնատիպության և եզակիության փնտրտուքը[2]:

«Արտաքին քաղաքական ինքնություն» եզրույթի կիրարկելիությունը կարելի է դիտարկել նաև Եգիպտոսի

[1] Գոռ Գևորգյան, պ.գ.թ., դոցենտ, ՀՀԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի ավագ գիտաշխատող
gorgevorgyan1976@gmail.com

[2] Идентичность: Личность, общество, политика, Под. ред. Семененко И.С., М., 2017, с. 465, https://www.imemo.ru/files/File/ru/publ/2017/2017-Identichnost.pdf

ներկայիս նախագահ Աբդել Ֆաթթահ ալ-Սիսիի արտաքին քաղաքականությունում:

1978 թ. Եգիպտոսի և Իսրայելի միջև ստորագրվեցին քեմփդևիդյան համաձայնագրերը. իսկ 1979 թ.՝ եգիպտա-իսրայելական հաշտության պայմանագիրը: Իսրայելի հետ հաշտության գալու արդյունքում, Եգիպտոսն արաբական աշխարհում հայտվեց «քաղաքական և մասամբ նաև տնտեսական մեկուսացման» մեջ[3]: Արաբական երկրների ճնշող մեծամասնությունը ոչ միայն դատապարտեց վերը նշված փաստաթղթերը ստորագրած Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթի «խաղաղասիրական քաղաքականությունը», այլև Եգիպտոսի դեմ պատժամիջոցներ սահմանեցին[4]:

1981 թ. Սադաթի սպանությունից հետո, նախագահի պաշտոնը ստանձնեց Հոսնի Մուբարաքը, որն իր քաղաքական հարցերով գրասենյակի ղեկավար Ուսամա ալ-Բազի հետ ~~միասին~~ առաջադրեցին «Եգիպտոսի փափուկ վերադարձը «արաբական ումմա»» ձևակերպմամբ արտաքին քաղաքական նոր հայեցակարգը[5]: Այդ հայեցակարգում արտացոլված էին նաև Եգիպտոսի արաբական քաղաքականության հիմնադրույթները[6]:

Առհասարակ, համաձայն արտաքին քաղաքականությունում ձևավորված ավանդույթի, Եգիպտոսի տարածաշրջանային քաղաքականությունն ունի մի քանի ուղություն՝ աֆրիկյան,

---

[3] Գևորգյան Գ., Արաբական աշխարհում Եգիպտոսի մեկուսացման հարցի շուրջ 1970 թ. վերջ 1980 թ. սկիզբ, Լրաբեր Հասարակական Գիտությունների, N 2, «608» մայիս-օգոստոս, Եր., 2003, էջ 107:

[4] Գևորգյան Գ., Եգիպտոսի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը նախագահ Հոսնի Մուբարաքի իշխանության առաջին տասնամյակում, (1981-1991 թթ.), Եր., 2018, էջ 36-37:

[5] ТАСС Атлас, N 8, M., 19.02.1982, с. 19. Տես նաև՝ The Islamic World Review, L. 1981, N 4, 12, p. 5.

[6] Գևորգյան Գ., Եգիպտոսի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը նախագահ Հոսնի Մուբարաքի իշխանության առաջին տասնամյակում (1981-1991 թթ.), Եր., 2018, էջ 52:

իսլամական և արաբական[7]: Մուբարաքի արտաքին քաղաքական նոր մոտեցումների և հարցադրումների հենասյունը արաբակենտրոնությունն էր[8]: Մուբարաքը շարունակեց Եգիպտոսի խաղաղասիրական քաղաքականությունը տարածաշրջանում, միևնույն ժամանակ ի տարբերություն Սադաթի ընդլայնելով համագործակցությունը տարբեր պետությունների հետ: Նպատակ ունենալով մեծացնել Եգիպտոսի գրավչությունը միջազգային հարաբերություններում, Մուբարաքը առաջադրեց «Եգիպտոսը բոլորի համար», ի տարբերություն Սադաթի՝ «Եգիպտոսը ամեն ինչից վեր է» կարգախոսը[9]: Մուբարաքին հաջողվեց ճեղքել Եգիպտոսի «քաղաքական մեկուսացումը»՝ բարձրացնելով իր երկրի հեղինակությունը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ միջազգային հարաբերություններում:

Մուհամմեդ Մուրսիի արտաքին քաղաքականության իսլամականացված շրջանը

Հոսնի Մուբարաքը գահընկեց արվեց 2011 թ. փետրվարին: Իսկ 2012 թ. հունիսին արտահերթ նախագահական ընտրությունների արդյունքում «Մուսուլման եղբայրների» թեկնածուն՝ Մուհամմեդ Մուրսին, դարձավ Եգիպտոսի նախագահ[10]: Հանրապետական Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ երկրի իշխանությունը ստանձնում էր իսլամիստ նախագահը: Սա էր պատճառներից մեկը, որ Մուրսին վերանայեց

[7] Տես՝ Egypt`s foreign policy within a challenging regional context https://www.europarl.europa.eu/thinktank/en/document/EPRS_BRI(2021)698062

[8] The Egyption Point of View on International Issues, Egyption Moves in International Arena, Arab Republic of Egypt, Ministry of Information, Cairo 1985, p.19.

[9] ТАСС Атлас, N 8, M., 19.02.1982, с. 21.

[10] Mohamed Morsi Briefly made History As Egypt`s first Democratically Elected President, 18.06.2019., https://www.ndtv.com/people/mohamed-morsi-briefly-made-history-as-egypts-first-democratically-elected-president-2054835

արաբական քաղաքականության որոշ դրույթներ՝ փորձելով սկիզբ դնել Եգիպտոսի նոր կերպարի ձևավորմանը[11]: Մինչ այդ «Մուսուլման-եղբայրները» արդեն իսկ հայտարարել էին, որ ցանկանում են վերանայել Եգիպտոսի արտաքին քաղաքականությունը[12]: Առաջին հերթին Մուրսին ձգտում էր ամրապնդել Եգիպոսի հարաբերություններն տարածաշրջանի այն երկրների հետ, որտեղ իշխանության մոտ գտնվում էին «Մուսուլման-եղբայրներին» գաղափարապես մոտ կանգնած կուսակցություններ և շարժումներ[13]:

Սրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ Մուրսիի իշխանության գալը նպաստեց եգիպտա-թուրքական և եգիպտա-կատարական հարաբերությունների աննախադեպ մերձեցմանը: Թուրքիան և Կատարը սկսեցին Մուրսիին ցուցաբերել քաղաքական, ֆինանսական և տեխնիկական լայնածավալ աջակցություն: Մուրսիի բարեկամական նոր հարաբերությունները մեծ մտահոգություն էին առաջացնում արաբական մի շարք երկրներում՝ մասնավորապես ՍԱԹ-ում[14]: Փաստացի Մուրսիի քաղաքականությունը նպաստում էր արաբական միջավայրում, ոչ արաբական ուժերի ինտեգրմանը, և, ըստ էության, արաբական քաղաքականությունում «Մուսուլման-եղբայրներ»-ի միջոցով ներմուծվեց ոչ արաբական սեգմենտը:

2012 թ. Կատարը և Թուրքիան հատկացրեցին Եգիպտոսին շուրջ 5 մլրդ. ԱՄՆ դոլլար: 2013 թ. Եգիպտոսի և Թուրքիայի միջև ստորագրվեցին առևտրի, փոխադրամիջոնների ոլորտների և

[11] Shama N., Egyptian Foreign Policy from Mubarak to Morsi: Against the National Interest. Routledge 2013, p. 280.
[12] Ибрагимов И Э., նշվ. աշխ., էջ 80:
[13] Նույն տեղում:
[14] Васильев А., Хайрулин Т., Коротаев А., Новый альянс в борьбе за лидерство в Арабском мире, М. 2019, с. 6,

ոստիկանական ուժերի համագործակցության վերաբերյալ 27 փաստաթուղթ[15]:

Հայտարարելով քեմփդևիդյան համաձայնագրերին հավատարիմ մնալու իր պատրաստակամության մասին, Մուրսին միևնույն ժամանակ քայլեր ձեռնարկեց «ՀԱՄԱՍ» շարժման հետ մերձենալու համար: 2012 թ. Մուրսին և «ՀԱՄԱՍ»-ի քաղբյուրոյի նախագահ Խալեդ Մաշալը մասնակցեցին Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության նիստին[16]: Այս հանգամանքն ուղիղ հարվածի տակ էր դնում ոչ միայն եգիպտա-իսրայելական հարաբերությունները, այլև որոշակի սպառնալիքներ ստեղծում ՍԱԹ-ի համար, որն ինչպես հայտնի է «Մուսուլման-եղբայրներին» ընկալում էր մեղմ ասած, որպես հակառակորդ:

Ի տարբերություն Մուբարաքի, նախագահ Մուրսին սատարեց սիրիական ընդդիմությանը՝ միանալով Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի հրաժարականը պահանջող տարբեր ուժային կենտրոնների կոչերին: Ավելին, 2013 թ. հունիսին Եգիպտոսի նախագահը փակեց Կահիրեում սիրիական դեսպանությունը[17], սառեցրեց Սիրիայի հետ հարաբերությունները և կոչ արեց Սիրիան դարձնել ոչ թռիչքային գոտի[18]:

Միևնույն ժամանակ ԱՄՆ-ը ձգտում էր կանոնակարգել հարաբերությունները Եգիպտոսի իսլամիստ իշխանությունների հետ. ԱՄՆ-ը «Մուսուլման-եղբայրներ»-ին դիտարկում էր որպես ամերիկյան քաղաքականության ռազմավարական գործընկեր:

[15] Նույն տեղում, էջ 7:
[16] Նույն տեղում:
[17] Изменение позиций значимых региональных игроков в ходе сирийского кризиса, с. 18, Տես՝ https://riss.ru/documents/751/c381301c41e7402aa940ebbc8be339ed.pdf
[18] Morsi Cuts Egypt`s Syria Ties, Back No-fly Zone, June 15, 2013, Տես՝ https://www.voanews.com/a/egypt-syria-no-fly-zone/1682647.html, Եգիպտոսի նախագահ Մուրսին պահանջեց նաև անհապաղ դուրս բերել Սիրիայից լիբանանյան «Հիզբալլահ»-ի բոլոր ստորաբաժանումները:

Պաշտոնական Վաշինգտոնը կարծում էր, որ «Մուսուլման-եղբայրներ»-ի միջոցով իրենք կկարողանան միավորել սուննի արաբական ուժերը՝ շիայական Իրանին և նրա դաշնակիցներին դիմադրելու նպատակով:

Վերլուծելով Մուրսիի կողմից առաջադրված տարածաշրջանային քաղաքականության նոր ուղեգիծը, ակնհայտ է դառնում, որ եգիպտական նախագահը սկսել էր փոխակերպել Եգիպտոսի ավանդական արաբական քաղաքականությունը: Միևնույն ժամանակ Եգիպտոսում խորացող տնտեսական ճգնաժամը և սոցիալական դժգոհությունները հանգեցրեցին Մուրսիի դիրքերի թուլացմանը: Մուրսիի դիրքերի խարխլման գործում, ոչ պակաս դերակատարում ունեցավ նաև ՍԱԹ-ը:

Եգիպտոսի նախագահը ոչ միայն չձգտեց կապիտալիզացնել Մուբարաքի թողած քաղաքական ժառանգությունը՝ մասնավորապես արտաքին քաղաքական ոլորտում, այլև սկսեց փոխակերպել պաշտոնական Կահիրեի ընկալելիությունը տարածաշրջանում: 2013 թ. հուլիսի 3-ին Եգիպտոսի պաշտպանության նախարար Աբդել Ֆաթահ ալ Սիսին պետական հեղաշրջում կազմակերպեց՝ ստանձնելով նախագահի պաշտոնը:

Աբդել Ֆաթահ ալ- Սիսիի արտաքին քաղաքական ինքնության նոր տեսլականը. անցում դեպի «Նոր Եգիպտոս»

Ի տարբերություն Մուրսիի, Սիսին, ինչպես և Մուբարաքը ներկայացնում էր եգիպտական ռազմաքաղաքական վերնախավը, ով որոշակի վերապահումներով փորձեց շարունակել մուբարաքյան արտաքին քաղաքական ուղեգիծը:

2013 թ. հուլիսի վերջին Սիսին ներկայացրեց Եգիպտոսի արտաքին քաղաքական նոր հայեցակարգը, որը ներառում էր հետևյալ դրույթները.

- Եգիպտոսի ազգային շահերը արտաքին քաղաքական առաջնահերթություններ են և վեր են պաշտոնական Կահիրեի դաշնակիցների շահերից։
- Եգիպտոս-ԱՄՆ-Իսրայել ռազմավարական համագործակցությունը չպետք է խոչընդոտի այլ պետությունների՝ մասնավորապես Ռուսաստանի և Չինաստանի հետ հարաբերությունների զարգացմանը։
- Եգիպտոսը շարունակելու է հարգել ու հավատարիմ մնալ տարածքային ամբողջականության և ներքին գործերին չմիջամտելու վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային բոլոր նորմերին։
- Եգիպտոսի քաղաքական հենասյուներից է շարունակում մնալ արաբակենտրոնությունը, որը պետք է ծառայի տարածաշրջանում անվտանգային համակարգի ձևավորմանը։
- Եգիպտոսը պետք է ամրապնդելով հարաբերությունները Ծոցի արաբական երկրների հետ, որոնք մաս են կազմելու տարածաշրջանային նոր անվտանգության համակարգին[19]
- Եգիպտոսն իր ուշադրության կենտրոնում է պահելու անդրսահմանային ահաբեկչության դեմ պայքարը և կանխելու է ազգային անվտանգությանը սպառնացող ցանկացած դրևորում։[20]

Սիսին, մեկնաբանելով իր կողմից առաջադրված արտաքին քաղաքական նոր հայեցակարգը, նշում էր, որ արաբական առանձին երկրների ազգային անվտանգության ապահովմանը կարելի է հասնել բացառապես տարածաշրջանային

[19] Kira S., Analysis: Egypt and Regional Security. Egypt Today, 17.05.2017, https://www.egypttoday.com/Article/1/4915/Analysis-Egypt-and-Regional-Security
[20] Dentice G., Shifting Priorities: The Evolution of Egypt's Foreign Policy, ISPI, 24.09.2020, https://www.ispionline.it/en/pubblicazione/shifting-priorities-evolution-egypts-foreign-policy-27409

անվտանգության միասնական համակարգ ստեղծելու միջոցով[21]: Սիսիի կարծիքով, անվտանգային այդ համակարգը պետք է կարողանա պահպանել տարածաշրջանի ինքնությունը և արաբականությունը[22]:

Սիսիի արտաքին քաղաքականության առանցքային հարցերից էր պաղեստինյան հարցը և եգիպտա-իսրայելական հարաբերությունները: Հավատարիմ մնալով 1979 թ. եգիպտա-իսրայելական հաշտության պայմանագրին[23], Սիսին փորձում էր պաղեստինյան հարցի խաղաղ կարգավորման գործում շարունակել Եգիպտոսի կողմից դեռ 1980-ականներին ստանձնած միջնորդի դերակատարումը:

2014 թ. նախագահական ուղերձում Սիսին նշեց, որ ջանքեր չի խնայելու Պաղեստինի անկախության հասնելու համար, և, որի մայրաքաղաքը պետք է հռչակվի Արևելյան Երուսաղեմը[24]:

Անտեսելով «ՀԱՄԱՍ» շարժման և «Մուսուլման-եղբայրներ»-ի համագործակցությունը, որը հաճախ սպառնում էր իր իշխանությանը, Սիսին կարևոր փորձում էր կարևոր միջնորդի դեր ստանձնել նաև «ՀԱՄԱՍ»-ի-Իսրայել հակամարտության դադարեցման գործընթացում[25]:

---

[21] Sisi: Egypt and Saudi are leaders of Arab security. AlArabiya News, 30.07.2015, https://english.alarabiya.net/News/middle-east/2015/07/30/FM-Egypt-Saudi-solidarity-key-to-protect-regional-security

[22] Նույն տեղում:

[23] Կարևոր է նշել, որ Իսրայելը ի տարբերություն Մուրսիին, վստահում էր Սիսիին: Այդ վստահության պատճառներից մեկն էր Եգիպտոսի քննադատական դիրքորոշումը «ՀԱՄԱՍ»-ի նկատմամբ: Jones P., It is Time to Establish a Middle East Regional Security System. The Cairo Review of Global Affairs. 24.04.2020, URL: https://www.thecairoreview.com/essays/it-is-time-to-establish-a-middle-east-regional-security-system

[24] Soliman M., Sisi`s New Approach to Egypt-Israel Relations, 29.06.2016, https://www.washingtoninstitute.org/policy-analysis/sisis-new-approach-egypt-israel-relations

[25] Тюкаева Т.И., Политические приоритеты президента АРЕ А.Ф. ас-Сиси, http://www.iimes.ru/?p=21555

Սիսիի միջնորդությամբ 2014 թ. դադարեցվեց ռազմական էսկալացիան «ՀԱՄԱՍ»-ի և Իսրայելի, այնուհետև նույն թվականի օգոստոսի 27-ին դադարեցվեց Գազայի շրջափակումը[26]:

Սիսին իր ուշադրությունն ուղղեց նաև Սիրիայի հետ խաթարված հարաբերությունները վերականգնելուն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ եգիպտա-սիրիական հարբերությունները տարբեր ժամանակներում պայմանավորել են արաբական աշխարհի անվտանգային միջավայրի ձևավորումը՝ փորձելով նպաստել միջարաբական հարաբերություններում առկա տարբեր խնդիրների հաղթահարմանը: 2013 թ. հուլիսի 7-ին, ալ-Սիսիի իշխանության գալուց չորս օր հետո, Եգիպտոսի արտաքին գործերի նախարարությունը հայտարարեց Դամասկոսում Եգիպտոսի հյուպատոսության աշխատանքների վերսկսման մասին[27]: Նույն օրը եգիպտա-սիրիական կողմի որոշմամբ՝ Կահիրում վերաբացվեց նաև սիրիական հյուպատոսությունը[28]: Իսկ 2014 թ. Սիսին կոչ արեց հարգել Սիրիայի տարածքային ամբողջականությունը[29]: Փաստորեն դրանով ևս, Սիսին մեկնարկեց երկու երկների միջև մերձեցման գործընթացը:

Սիսիի արաբական քաղաքականության օրակարգում էին նաև եգիպտա-լիբիական և եգիպտա-եմենական հարաբերությունները: Ստանձնելով նախագահի պաշտոնը, 2014 թ. Սիսին հայտարարեց, որ Լիբիայում հակամարտության և պատերազմի ծավալների ընդարձակման ռիսկերը իրավունք են

[26] Соглашения с ХАМАС-ом: о разоружении пока речи не идет, 26.08.2014, https://archive.9tv.co.il/news/2014/08/26/183805.html

[27] Egypt and Syria to keep consulate relations: FM spokesperson, Ahram online. 2013. 7 July, https://english.ahram.org.eg/NewsContent/1/64/75951/Egypt/Politics-/%20Egypt-and-Syria-to-keep-consulate-relations-FM-spo.aspx

[28] Egypt and Syria to keep consulate relations: FM spokesperson, նշվ. աշխ.:

[29] Situation of the Egyptian-Syrian Relations, https://en.eipss-eg.org/situation-of-the-egyptian-syrian-relations-2012-2021/

տալիս Եգիպտոսին զորամիավորումներ ուղարկել այդ երկիր[30]: Միևնույն ժամանակ, Սիսին հաշվի առնելով լիբիական ճգնաժամում տարբեր ուժերի՝ այդ թվում և Թուրքիայի ներգրավվածությունը, փորձում էր աջակցել ճգնաժամի խաղաղ հաղթահարմանը՝ ներգրավելով միջազգային այլ ուժեր[31]: Եգիպտոսը հանդես եկավ նաև Եմենում պատերազմի դադարեցման կոչով և առկա ճգնաժամը խաղաղ հանգուցալուծման առաջարկով: Սիսին շարունակական ակտիվություն ցուցաբերեց եմենական ճգնաժամը հաղթահարելու գործում՝ հանդիպելով Եմենի բարձրաստիճան տարբեր պաշտոնյաներին[32]:

Սիսիի օրոք առավել սերտացան հարաբերությունները Սաուդյան Արաբիայի և նրա դաշնակից երկրների, այդ թվում՝ Արաբական Միացյալ Էմիրությունների հետ[33]:

Եգիպտոս-Սաուդյան Արաբիա-Ծոցի երկրներ որակական նոր հարաբերությունների մասին է վկայում այն փաստը, որ Սիսիի իշխանության գալուց հետո, 2013 թ. վերջին ՍԱԹ-ը, Քուվեյթը և Արաբական Միացյալ Էմիրությունները Եգիպտոսին հատկացրեցին շուրջ 27 մլրդ. ԱՄՆ դոլար[34]: Ոչ պակաս կարևոր է այն հանգամանքը, որ ՍԱԹ-ը և ԱՄԷ-ն և Քուվեյթը արաբական

[30] Egypt has a legitimate right to intervene in Libya, 20.06.2020, https://www.reuters.com/article/ozatp-uk-libya-security-egypt-idAFKBN23R0ME-OZATP

[31] Колоссальный взрыв: Египет готов вступить в ливийскую войну, 26.06.2020, https://www.gazeta.ru/politics/2020/06/26_a_13132411.shtml

[32] Egypt reiterates support for political solution in Yemen, 20.09.2021., https://www.aa.com.tr/en/middle-east/egypt-reiterates-support-for-political-solution-in-yemen/2369990

[33] Burning ambition: Egypt`s return to regional leadership and how Europe should respond 11.10.2021, https://ecfr.eu/publication/burning-ambition-egypts-return-to-regional-leadership-and-how-europe-should-respond/

[34] Qatari-Turkish Alliance Challenge for Regional Leadership. Part 1, https://asaf-today.ru/s032150750006519-2-1/

աշխարհում առաջինն էին, որոնք ողջունեցին Սիսիի իշխանության գալը Եգիպտոսում[35]:

Այդպիսով, 2013 թ. գալով Եգիպտոսում իշխանության, Սիսին՝ շնորհիվ արտաքին քաղաքական նոր հայեցակարգի արաբական ուղղության, կարողացավ բավականին կարճ ժամանակում ներգրավել իր երկիրը ոչ միայն աշխարհաքաղաքական գործընթացներում, այլև նպաստել Եգիպտոսի հեղինակության որոշակի ամրադմանը: Ներկա իրողությունների պայմաններում դեռ վաղ է խոսել Եգիպտոսի երբեմնի հզոր դիրքերի ամբողջական վերականգնման մասին, սակայն այդ ուղղությամբ Սիսիի ձեռնարկվող քայլերը շարունակական են:

Ամփոփելով՝ Սիսիի առաջադրած արտաքին քաղաքական նոր հայեցակարգով պայմանավորված իրողությունները կարող ենք նշել հետևյալը.

- Սիսին կարողացավ արտաքին քաղաքական ոլորտում կապիտալիզացնել Մուբարաքի 30-ամյա կառավարման շրջանի քաղաքական ժառանգությունը, որը նախորդ նախագահ Մուրսիի կողմից գրեթե ամբողջությամբ անտեսվեց:
- Սիսին արաբական քաղաքականության իր ուղեգիծը դարձրեց եգիպտական ռազմաքաղաքական վերնախավի համար ընկալելի և ընդունելի:
- Սիսին ընդգծեց, որ Եգիպտոսի ազգային շահը որևէ կերպ սակարկելի չէ, այն ավելին է, քան Եգիպտոսի դաշնակցի շահը:

[35] Saudi Arabia, UAE, Kuwait strong backers of Egypt`s economy, March 14, 2015, https://dailynewsegypt.com/2015/03/14/saudi-arabia-uae-kuwait-strong-backers-of-egypts-economy/ Egypt`s Economic Profile and Statistics. Cairo: the Egyptian Center for Economic Studies, 2017, p. 11,

- Սիսին առաջնահերթություն համարեց տարածաշրջանում անվտանգության նոր համակարգի ստեղծումը, որի մաս պետք է կազմեն նաև Ծոցի արաբական երիները՝ Սաուդական Արաբիայի հետ միասին:
- Սիսին պատրաստակամություն հայտնեց հետևողականորեն պայքարել ահաբեկչության դեմ, ինչը գործնականում անում է:
- Սիսին իր քաղաքականության ծիրում է պահում պաղեստինյան հարցի խաղաղ կարգավորման գործընթացը, ջանքեր գործադրում Սիրիայում, Լիբիայում և Եմենում ճգնաժամի հաղթահարման և կայունության հաստատման ուղղությամբ:

ТРАНСФОРМАЦИЯ АРАБСКОЙ ПОЛИТИКИ ЕГИПТА: ВОЗМОЖНОСТИ И ВЫЗОВЫ (1981-2014 ГГ.)

Гор Геворгян

(Резюме)

Важное место в изучении внешней политики современного Египта, является рассмотрение процесса трансформации внешнеполитической концепции этой страны начиная с эпохи президентства Хосни Мубарака, включая период президенства Мухаммеда Мурси, и до начала правления Абдель Фаттаха ас Сиси. Ключевое место во внешней политике Сиси, в отличие от Мурси, занимал относительный арабоцентризм, который должен был в первую очередь соответствовать национальным интересам Египта.

В результате провозглашенной Сиси новой внешнеполитической концепции, за короткое время стало возможным подправить пошатнувшуюся репутацию Египта в регионе, а также важную роль в международных отношениях.

О полном и былом восстановлении роли и мощи Египта в регионе, еще говорить рано, однако предпринятые президентам Сиси

в этом направлении внешнеполитические шаги являются конструктивными и подчеркиваются последовательностью.

TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY: OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014)

Gor Gevorgyan

(Summary)

The process of transformation of Egypt`s foreign policy concept since the presidency of Hosni Mubarak, including the presidency of Mohammed Morsi, and prior to the beginning of Abdel Fattah el Sisi`s reign occupies an important place in the study of modern Egyptian foreign policy. In contrast to Morsi, Sisi`s foreign policy was predicated on a relative Arab-centrism intended to serve Egypt`s national interests first and foremost.

As a result of Sisi`s new foreign policy concept, Egypt was able to restore its reputation in the region and play a significant role in international relations within a short period. It is too early to discuss the complete and former restoration of Egypt`s position and power in the region. Still, President Sisi`s foreign policy moves in this direction have been constructive and consistent.